

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՏԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ԱՇԳԱԲԱՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 1999 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆՎԱՐԻ 13-Ի ՆԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԿԻՑ ՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՏԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 սեպտեմբերի 2013թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովիանիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության մշակույթի նախարարի պեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 30-ին Աշգաբաբում ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի սպեղծման մասին» 1999 թվականի հունվարի 13-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի հունիսի 25-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հեղափոխելով Արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի սրեղծման մասին» 1999 թվականի հունվարի 13-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2012 թվականի մայիսի 30-ին՝ Ազգաբարձում, Հայաստանի Հանրապետության վարչապետ Տ. Սարգսյանի կողմից:

Արձանագրության համար պայմանագրաիրավական հիմք է հանդիսանում 1999 թվականի հունվարի 13-ին Ստրասբուրգում ստորագրված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի սրեղծման մասին համաձայնագիրը (Համաձայնագիր), որը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 1999 թվականի նոյեմբերի 23-ին:

Արձանագրության վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունն արել է հայտարարություն:

2. Ըստ գործի նյութերի՝ Արձանագրությունն ուղղված է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կարգի, ինչպես նաեւ Համաձայնագրի մի շարք դրույթների հստակեցմանը:

3. Ըստ Արձանագրության՝ կողմերը համաձայնում են Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

- 4-րդ հոդվածի 1-ին կետում «Գիտական-տեխնոլոգիական զարգացման միջպետական կոմիտե (հեղափոխում՝ ԳՏԶ ՄԿ)» բառերը փոխարինել «Գիտական-տեխնիկական եւ նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհուրդ (հեղափոխում՝ ԳՏՆ ՄԽ)» բառերով եւ «Տնտեսագիտական խորհրդի միջպետական փոփոխության կոմիտե (հեղափոխում՝ ՄՏԿ)» բառերը՝ «ԱՊՆ փոփոխության խորհուրդ» բառերով.

- 4-րդ հոդվածի 2-րդ կետում ՄՏԿ հապավումը փոխարինել «ԱՊՆ փոփոխության խորհուրդ» բառերով.

- 4-րդ հոդվածի 3-րդ կետում ԳՏԶ ՄԿ հապավումը փոխարինել ԳՏՆ ՄԽ հապավումով.
- 9-րդ հոդվածում բացառել «եւ ուժի մեջ են մտնում Նամաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգին համապատասխան» բառերը:

4. Արձանագրությամբ Նայասրանի Նանրապետության սրանձնած պարտավորությունները համահունչ են Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածի դրույթներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2012 թվականի մայիսի 30-ին Աշգաբարում ստորագրված՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի սրեղծման մասին» 1999 թվականի հունվարի 13-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10 սեպտեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1107